

յանուն լոցա արարեալ է մեծաւ աշխատութեամբ, ճիտակս եւ կամ զտակս ինչ մարգարտոյ կարի մեծագնոյ՝ կանայք քրիստոնէիցոյ չհամարին ինչ հանել յանձանց եւ տալ եւ դնել փխրանս ինչ յոսկերաց այնպիսեացն: 9 Այլ դուք ուշիմ<sup>1</sup> լերուք, եւ յայնմ վայրի եղիցի սպանումն լոցա, ուր յայնպիսեաց կարծեաց եւ պատուոյ՝ սպանեալքն եւ որք սպասեն ոսկերացն՝ վրիպեալ լիցին»:

10 Եւ զայս ամենայն բանս լուեալ ի թագաւորէն ամբարապետին Վեհդէնշապիոյ յԱպար աշխարհին, եւ մտեալ ի դղել շահաստանի Նիւշապիոյ՝ խաւսէր բանս սուտս, եւ տայր աւետիս նենգութեամբ, թէ «Արքայից արքայ հրաման ետ ինձ՝ զհայ երիցունսդ որ աստ ի կապանս են՝ արձակել յաշխարհն<sup>2</sup> իւրեանց, եւ վասն այլ ազատանւոյն<sup>3</sup> որ ի Յայոց են՝ պայման արար, թէ ես յորժամ գամ՝ արձակեմ ի կապանաց»:

11 Եւ լուեալ զայս բազմութեանն որ էին ի շահաստանին՝ կարծէին գոլ արդար զխաւսեցեալսն ի Վեհդէնշապիոյ: 12 Բայց սուրբ քահանայքն իբրեւ լուան՝ իսկոյն գիտացին ազդեցութեամբ սուրբ Յոգւոյն զհասեալ բարի ժամ յուսոյ նահատակութեան իւրեանց. սկսան խաւսել ընդ նախարարսն Յայոց, ընդ որս կապեալն էին, եւ ասեն. «Թեպէտ եւ կամեր արդեալք Վեհդէնշապուհ թաքուցանել զճշմարտութեան բանն՝ ոչ կարաց. քանզի երկոքեան մեր այդ իրք այդպէս կատարելոց են, որպէս եւ լուանն իսկ ի նմանէ ամենեքեան. զի եւ դուք<sup>4</sup> իբրեւ ողորմութեամբն Քրիստոսի արձակելոց էք ի կապանացդ, եւ մեք զաւրութեամբ սուրբ Յոգւոյն կատարեալ զտաղտուկ զաւուրս կենցաղոյս պանդխտանոցիս՝ զնալոց եմք ի բնիկ աշխարհն մեր եւ յընտանիս, ուր դասք առաքելոցն են եւ աւթեանք սրբոցն, ի բանակ տանուտեառնն եւ արարչին ամենեցուն Քրիստոսի<sup>5</sup>, որ ասացն. *Ուր ենս եմ՝ անդ եւ պաշտանեայն իմ եղիցի*<sup>ա</sup>»:

**ԾԱ.** Եւ սոցա դեռ եւս խաւսելով զայս այսպէս՝ մի ոմն ի դահճացն, որ սիրելապէս ընդունելութիւնս ունէր ընդ կապեալ նախարարս Յայոց, լուեալ ճշգրտապէս յերանելի Խուժկէն՝ եկեալ յայտնէր լոցա զստոյգ խորհուրդն, եւ տայր զհտել զարդարն, թէ ո՛րպէս տուեալ է հրաման թագաւորին յաղագս սպանման քահանայիցն: 2 Չոր ստուգեալ նախարարացն՝ լային դառնապէս. իբրեւ ոչ եթէ ոչ կամելով զնահատակութիւն սրբոցն, որում եւ ինքեանք

1 Ատ. ուշիմն

2 Ձ. յաշխարհս

3 ՏՏ. ազատանոյն

4 ՏՏ. զի դուք

5 ՏՏ. յարարիչն ամենեցուն Քրիստոս

ա Յովհ. ԺԲ 26